Որ զաստուածասաստ գաւազանաւդ քո հարեր առ ի խորոտ զորքայն, որդիս միածին· և փրկութին հաստատեցեր զաթոռ թագաւորին մերո տրդատա· աւրհնեալ տէր աստուած։

Որ ընդփառակիցին քո հաւր և որդո կատարեցեր զկամս հոգիտ ճշմարիտ· զրթութեամբ և ողորմութեամբ լուսաւորեցեր զթագաւորն հաստատնեաց, արդանդ մաքուր սուրբ աւազանաւն· աւրհնել· տէր· աստ·

Գ· Զտէր աւրհնեցէք բարձր արարէք ըղ [նա յաւիտեան]։

Զամենայնթագաւորն ըղհայրն երկնաւոր թագաւորք երկրի ըրնծութեամբ ըղտէր աւրհնեցէք բարձր արարէք զնա յաւիտեան։

Զփառակից որդին ըղծնեալն ի կուսէ զովելով որդիք մարդկան ըղտէր աւրհնեցէք· բարձր արարէք զնա յաւիտեան։

Ա· Որ ողորմութեամբ քո տէր ողորմեցար թագաւորին մերո տրդատա· և ետուր մարդասիրապէս շնորհս և ողորմութիւն· ողորմեա մեզ քրիստոս անմահ թագաւոր։

Որ աստուածային փառաւք պըսակեցեր զորքայն ի ձեռն ճշմարիտ քահանայապետին· և ետուր զիրաւունս արդարութեան ի ձեռըն սորայ· ողորմեա մեզ քրիստոս անմահ թագաւոր։

Որ գերագոյն շնորհաւք բարձրացուցեր զեղջիւր սուրբ եկեղեցո· ուրախութեամբ և սիրով խառնեցեր զազգս մարդկան ընդ որդիս լուսո· ողորմեա մեզ քրիստոս անմահ թագաւոր։

Ե· Թագաւոր հըզաւր բաշխող բարութեանց, զեկեղեցի քո անշարժ պահեա աղաչանաւք թագաւորին քաջ և յաղթող մեծին տրդատա· վասն որո և մեք աւրհնեմք զանմահ թագաւորդ։

Որ զուարճացուցեր փառաւք զմեծն աշխէն տիկին և զաւրիորդըն խոսրովիդուխտ, զարմացուցեր տեսլեամբ հոգով զգըլխաւորս պահել կենդանի· վասն որո և մեք աւրհնեմք զանմահ թագաւորդ։

Որ ի ձեռըն ճըշմարիտ սուրբ լուսաւորչին հաստատեցեր զթագաւորն մեր· որ բաղմաչար չարչարանաւք ի խաւարէ կռապաշտութեան դարձոյց զմոլորեալքս· վասն որոյ և մեք երգեմք ըղփառս ի բարձունս։[1]

✠ [2]Հրաշափառ ծագումն ի հաւրէ, որ պարադրեցար յերկնից յարդանդ կուսական· նստար յաթոռ զաւթի ածեալ թագաւոր· շնորհեա տրդատա զաթոռ տիրական։

Հոգի հզաւր բխումն ի հաւրէ, որ աղաւնակերպ իջեր ի յորդանան, պսաւր յերկնից լոյս ծագեցար փայլմամբ թագարքածին որդոյն խոսրովու։

Որ ի սպառեալ սիրո սրբութեան զաւրացան զաւակըն[3] հազարածին· խնդա բարկութեամբ սրով քո սատակեա զուրացողն· կանգնել վերատին զնշան փրկչական։

1· Մանկունքը— „Որ գերագոյն„։

2· Երեքի—ճաշու·

3· Զ· զաւակն·

## ԱԶԳԱՅԻՆ·

## ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ·

## ՄԱՅՐ ԱԹՈՌ·

Մեծի պահոցիս մէջ Վեհափառ Հայրապետի կարգադրութեամբ քարոզ է խօսւում կիւրակէ երեկոները Մայր Տաճարում և շաբաթ երեկոները կամ կիւրակէ առաւօտը Վաղարշապատի եկեղեցում։ Առաջին կիւրակէին Նորին Սրբութիւնը խօսեց Մայր Տաճարում բնաբան և նիւթ ընտրելով Եսայի Մարգարէի ԾԸ գլուխը, որի մէջ Աստուած մարգարէի բերանով ցոյց է տալիս իւր ժողովրդին, թէ ինչպէս պէտք է պահք պահել, որ ընդունելի լինի Իրեն․ այն է՝ բրդել հաց քաղցածին, հագցնել մերկին, պատսպարել օտար անտուն աղքատին, քակել անիրաւութեան բոլոր կնճիռներն, հրաժարուել մարմնական ցանկութիւններից, որոնք մարդուն հեռացնում են Աստուածպաշտութեան ճանապարհից․ այդ ժամանակ միայն մեր պահած պահքը ընդունելի կըլինի։ Այն պարզ ոճովն ու զգայուն լեզուաւ, որ Հայոց Հայրիկին միայն յատուկ են, Աստուծոյ խօսքը բացատրելով՝ Վեհ. Հայրապետն ազդու յորդորներ կարդաց տնանկ և թշուառ գաղթականներին օգնելու համար։

Բ· կիւրակէին խօսեց Գեր· Սուքիաս Արքեպիսկոպոսը բնաբան առնելով Ս· Պօղոս Առաքեալի խօսքը· «որ զհոգի Քրիստոսի ոչ ունի, սա չէ նորա»։ Ընդարձակելով իւր խօսքը Նորին Բարձր Սրբազնութիւնը յորդորեց ժողովրդեան չշեղել աւետարանի ճշմարիտ վարդապետութիւնից Քրիստոսի հոգին իւր մէջ արծարծելով։

Դ․ Կիւրակէին դարձեալ խօսեց Նորին Վեհափառութիւնը․ Հին օրինաց պատուէրներով, մեծատան և աղքատ Ղազարոսի ինչպէս նաև Յայմաւուրքի մէջ յիշուած անողորմ Պետրոսի օրինակներով ու ժողովրդական ասացուածներով պատկերացրեց ողորմածութեան, իբրև ամենամեծ առաքինութեան, վսեմութիւնը, յիշեցրեց վերջին դատաստանի վճիռը, որով ահեղ Դատաւորը ողորմածներին է միայն հրաւիրում․ «Եկայք, օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ արքայութիւնն ի սկզբանէ աշխարհի․ զի քաղցեայ, և ետուք ինձ ուտել․ ․ ․»։ — Ունկնդիրները հեռացան տաճարից այն տպաւորութեամբ, որ անզուգական Քարոզիչը՝ թէպէտ ծերութեան ալեաց և վշտալի հոգոց ծանրութեան ներքոյ ճնշուած, դեռ կենդանի է պահել տասնեակ տարիներէ ի վեր Իւր ժողովրդի սրտի և հոգու հետ խօսող Իւր ճարտար լեզուի բոլոր զօրութիւնը։

---

Դ․ Կիւրակէն խօսեց Գեր․ Մակար սրբազանը սրտի և հոգւոյ մաքրութեան մասին, Երուսաղէմի տաճարի օրինակով բացատրելով, թէ ինչպէս Աստուած միայն սուրբ տեղ բընակել կարող է․ և ուրեմն մեր սիրտն այն ժամանակ Նորա համար բնակարան կըլինի, երբ մաքրուած է ամէն տեսակ ամբարիշտ մտքերից և աղտեղի զգացմունքներից։

---

Վեհափառ Հայրապետի հրամանաւ Վաղարշապատի գիւղի եկեղեցում քարոզում են վարդապետները․ արդէն խօսեցին Տ․ Տ․ Կարապետ, Եղիա և Սահակ։

---

Վեհափառ Հայրապետը ս․ Էջմիածնի գաւառի գիւղական ժողովրդեան հոգևոր կարօտը լցուցանելու համար, բարեհաճեց Կոնդակաւ նշանակել Տ․ Կորիւն վարդապետին քարոզելու Մեծի պահոց ընթացքում։ Բարեշն․ Հայր Կորիւնը եռանդով կատարում է այդ գեղեցիկ գործը։

---

Ամսոյս 7-ին Ս․ Սինոդում տուին հպատակութեան երդում Մայր Աթոռի երեք միաբան․ (նախկին տաճկահպատակ) Տ․ Գէորգ Որշտունի, Թովմա Բաղդասարեան և Կորիւն Սահակեան վարդապետները․ երդուեցնողն էր Տ․ Խաչիկ վարդապետը։

---

Մայր Աթոռի Վանական կառավարութեան անդամներից Գեր․ Տ․ Անանիա եպիսկոպոսն անձնական տկարութեան պատճառաւ հրաժարական մատոյց, որ և ընդունուեց Վեհ․ Հայրապետի կողմից։

---

Վեհափառ Հայրապետի հրամանաւ ամսոյս 23-ին Գեր․ Մակար եպիսկոպոսը Վաղարշապատի եկեղեցում աբեղայութեան աստիճան տուեց Մայր Աթոռիս միաբան Շնորհ․ Բագրատ սարկաւագ Մաթէոսեանին, վերակոչելով Մաթէոս․ Նորա հետ ձեռնադրուեցան նաև երեք քահանայ, որոնցից մէկը Գէորգեան Ճեմարանի դպրոցական մասի ընթացաւարտ է։

---

Ամսոյս 22-ին ճաշից յետոյ Վեհ․ Հայրապետը բարեհաճեցաւ Երևան գնալ մի քանի կարևոր առաջնորդական և դպրոցական գործեր կարգադրելու համար։

Հետևեալ օրը կիւրակէ երեկոյեան Ս․ Սարգիս եկեղեցւոյ մէջ Նորին Օծութիւնը հոծ բազմութեան ներկայութեամբ խիստ ազդու մի քարոզ խօսեց, բացատրելով անիրաւ դատաւորի, փարիսեցու և մաքսաւորի առակներով աղօթքի ոյժը և նշանակութիւնը։

Երկուշաբթի երեկոյեան Նորին Սրբութիւնը ողջամբ վերադարձաւ Մ․ Աթոռս։

---

Ամսոյս 23-ին Ճեմարանի վարչութիւնը ս․ Պատարագից յետոյ հոգեհանգստեան կարգ կատարել տուեց ի յիշատակ Ճեմարանի նախկին տեսչի և ուսուցչի, հանգուցեալ Նիկողայոս Խոսրովեանի։ Բարեշ․ Տ․ Կարապետ վարդապետը մի պատշաճաւոր դամբանական խօսեց։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ․

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

1․ Լօնդօնի ս․ Յովհաննու եկեղեցւոյ մէջ խօսուած Թորոս քահ․ Ջուղայեցու Քարոզը․ . . . 97
2․ Արեգ ամիս . . Կ․ Կ․ . . 102
3․ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ . . . . . . . 111

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ

4․ Մատենախօսութիւն . . . Գրասէր . . 116
5․ Ս․ Լուսաւորիչ եւ Տրդատ եւ նոցա նոր չարականները․ . . . Ս․ Վ․ Ամատունի . 121

ԱԶԴԱՑԻՆ

12․ ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ . . . . . . . 8
ՄԱՅՐ ԱԹՈՌ . . . . . . . . . .
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ․
ՅԱՒԵԼՈՒԱԾ․ Անանիա Մոկացի, Գ․ Տ․ Մկրտչեան․
ԾԱՆՈՒՑՈՒՄՆ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ․